

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

E-mail: yerazhshtakarihakastan@gmail.com
Doi: 10.58580/18290019-2023.2.65-96

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Սվետլանա Կորյունի Սարգսյանի 18.9.2024 թ.,
ընդունվել է տպագրության՝ 20.9.2024 թ.,
ներկայացրել են մի շարք հեղինակներ՝ 14.3.2024 թ.

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԴԻՐԻՇՈՐ ԶԱՎԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Ամփոփում

Նյութը պատրաստվել է անվանի արվեստագետ, հասարակական գործիչ, դիրիժոր Զավեն Վարդանյանի նրա ժամանակակիցների, գործընկերների, ուսանողների և անվանի արվեստագետների հուշերով: Այդ միջոցով բացահայտվում է տաղանդավոր դիրիժորի ստեղծագործական դիմանկարը, էությունը: Ներկայացվում է նաև նրա կողմից հիմնադրած Երևանի կամերային նվագախմբի գործունեությունը և պատմական ընթացքն ու տեղը հայ մշակույթի անդամատանում:

Բանալի բառեր. Զավեն Վարդանյան, դիրիժոր, Երևանի կամերային նվագախումբ, գերմանական լիդ, դիմանկար, երգիչներ, արտիստներ, մենակատարներ, կոմպոզիտորներ:

Abstract

The material has been prepared through the memories of the renowned artist, public figure, and conductor Zaven Vardanyan, along with those of his contemporaries, colleagues, students, and prominent artists. Through this, the creative portrait and essence of the talented conductor are revealed. Also presented is the activity of the chamber orchestra of Yerevan, founded by him, and its historical trajectory and place in the realm of Armenian culture.

Key Words: Zaven Vardanyan, conductor, Yerevan Chamber Orchestra, German lied, portrait, singers, artists, soloists, composers.

Абстракт Материал подготовлен по воспоминаниям современников, известных деятелей искусства, коллег, учеников известного артиста, общественного деятеля, дирижера Завена Варданяна. Раскрывается творческий портрет талантливого дирижера. Представляется также деятельность и место основанного им Ереванского камерного оркестра в армянской культуре.

Ключевые слова. Завен Варданян, дирижер, Ереванский камерный оркестр, немецкая Lied, дирижер, портрет, певцы, артисты, солисты, композиторы.

ԱՆՓՈՒՍԱՐԻՆԵԼԻ ՌԻՍՈՒՑԻՉԸ

Ֆրանսաբնակ մեներգիչ Սուրեն Շահիջանյանը և շվեյցարաբնակ մեներգչուհի, մանկավարժ Ջուլիետ Գալստյանն իրենց կյանքի ու ստեղծագործական ուղու ընթացքում կարևոր ու անմոռանալի են համարում դիրիժոր Զավեն Վարդանյանից ստացած դասերը: Նրանց մտորումներում անբաժան է այս խորհրդավոր արվեստագետի կերպարը: Գիսվենք այն հուշերով, մտքերով, որոնք հաղորդագրությունների միջոցով մեզ են հայտնել մեր շրջանավարտները:

Զավեն Վարդանյանը նրանց համար անփոխարինելի մարդ ու երաժիշտ է, և ընդգծում են, որ, այո, լինում են ԱՆՓՈՒՍԱՐԻՆԵԼԻՆԵՐ: Կար ուսանողների ու պատանի երաժիշտների մի խումբ, որ «մեծացել, երաժիշտ ու մարդ է դարձել Զավեն Վարդանյանի շնորհիվ»: Սուրեն Շահիջանյանի համար Զավեն Վարդանյանն իր ամբողջ կյանքի ուսուցիչն է: «Ավելին, ինձ համար հոր նման էր. միշտ դիմել եմ պարոն Վարդանյան, բայց հոգուս մեջ ասել եմ՝ «պապա ջան»: Դա միմյանց փոխանցվող սեր էր: Ջուլիետ Գալստյանը վստահ է, որ Զավեն Վարդանյանն իրենց հիշողություններում կմնա՝ իր հումորով ու ջերմությամբ:

«1990-ականների ցրտին ու մթին, մոմի լույսի տակ քննություն, համերգներ էինք պատրաստում, ու երաժըշտությունը մեզ ջերմացնում էր: Մաեստրոյի տունը տաք էր: Մեզ էլ սիրում էին երեխաների նման», - հիշում է Ջուլիետ Գալստյանը: «Կար հիանալի տարածք, որտեղ համախմբվում էին: Զավեն Վարդանյանը և իր կինը՝ դաշնակահարուհի Տաթևիկ Զարյանը, Բայրոն փողոցի իրենց անկյունը, որն այդ տան ավագի մեծանուն գրականագետ, թատերագետ, ակադեմիկոս Ռուբեն Զարյանի բնակարանն էր, դարձել էր մի «վերնատուն»: Այստեղ մեծ մի աշխարհ էր, և երիտասարդները լուսավորված են եղել այդ աշխարհով: Գալիս էր նաև մեներգչուհի Վարդուհի Խաչատրյանը, երբեմն՝ Էդուարդ Թոֆյանը: Մա սիրո տարածք էր, որն սկսվել էր դեռևս Ռուբեն Զարյանից ու իր տիկնոջից՝ Նելլի Հաբեթովնայից, այստեղ էր փոքրիկ Ռուբենը՝ իր ծնողների սիրուց ծնված մի եակ:

ՊԻՍՏՆԿԱՆ ՀՈՒՇԵՆՈՒՄ



Սուրեն Շահիջանյանն ասում է՝ մեր դժբախտությունը դպրոց կորցնելն է. երաժիշտներ կան, որ սովորում են, փորձ են ձեռք բերում, զբաղվում են, բայց չեն փոխանցում: Զավեն Վարդանյանն ունեցել է կիսվելու շնորհը: Նա բացառիկ երաժիշտներից էր, ով կարողանում էր տալ գիտելիքը, սերը, իմաստությունը, վստահությունը: Նրա կերպարի մեջ երիտասարդները տեսնում էին այդպիսի ուժեղ մարդու: Խոստովանում է, որ անձամբ շփվել է մեծ երգիչների, արվեստագետների հետ, բայց մինչև չհասկանանք ինչ ենք ուզում, չենք կարող լավ ժողովուրդ լինել: Կարևոր է և պետք է լուրջ վերաբերվել այսպիսի հարցերին. «Գիտելիքը ձեռք բերենք ոչ թե որպես ինֆորմացիա, այլ՝ էության հարըստացում: Սրանում է Զավեն Վարդանյանի մեծությունը»: «Մաեստրոն իր ամբողջ ընտանիքով լիացրել է իմ էությունը թե՛ երաժշտության, թե՛ գիտության, թե՛ կրոնի մակարդակներով», - շեշտում է Սուրեն Շահիջանյանը:

«Փոքր ժամանակ իրենց տանն եմ ապրել, սովորում էինք, լսում էինք Ֆ. Շուբերտ, Գ. Մալեր: Ամբողջ օրը ջերմ լուրս էր, և դա հիանալի էր: Երբ նրա մոտ էի գնում, ասես, դեպի ինձ էի վերադառնում», - նշում է Սուրեն Շահիջանյանը: Բայրոնի «վերնատանը» հիանալի պատկերներ կային՝ Մարտիրոս Մարյանի և այլ մեծ նկարիչների գործերով, այստեղ էր համբավված գիտնական Ռուբեն Զարյանի գրադարանը, որը հասանելի էր նաև այս պատանիներին, օգտվում էին նաև Զավեն Վարդանյանի նոտաներից ու նրա միշտ պատրաստակամ աջակցությունից: «Այսօր կարելի է որևէ գործ լսել տասնյակ կատարումներով,

մի հպումով տեսնում ենք օտարալեզու վոկալ գործերի տեքստերը, իսկ այդ տարիներին անձանոթ բառերը թարգմանում էինք «վերնատան» բառարաններից, Զավեն Վարդանյանն էլ աջակցում էր առօրյա հարցերում: Պատրաստվում էինք, մեզ հետ աշխատում էր զուտ գերմանական ծրագրերով, բեմ էինք բարձրանում և գերմաներենի արտասանությամբ երգում էինք Ռ. Շոբերտ, Ն. Վոլֆ, Յ. Բրամս: Մատենադարան խոսում էր ոչ միայն երաժշտության, այլ նաև պոեզիայի ու գեղանկարչության մասին: Ու աննկատ ամեն ինչը բերում էր դեպի Ֆ. Շոբերտի ու Ն. Վոլֆի աշխարհը: Հարմոնիկ վերլուծության մեջ ցույց էր տալիս, թե ինչու է հենց այդ տեղում մաժորը փոխում միևնույնի և այլն: Այսպես, փոքրիկ չափաբաժիններով սովորեցնում էր մտածել երգելու ժամանակ», - հիշում է Զուլիետ Գալստյանը:

Սուրեն Շահիջանյանը Զավեն Վարդանյանի ղեկավարությամբ ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ երգել է Ռաֆայել Իրեչտակապետի դերերգը (բաս) Յ. Հայդնի «Աշխարհի արարումը» օրատորիայում: Ունեցել են համատեղ ծրագրեր, որտեղ Սուրեն Շահիջանյանը երգել է Ֆ. Շոբերտ, Զուլիետ Գալստյանը՝ Ռ. Շոբերտ, Ն. Վոլֆ: Բայց նկատում են, որ բեմ բարձրանալուց ավելի թանկ բան կար ստեղծագործությունները պատրաստելու պահերը, անվերջ շնորհակալ են Տաթևիկ Զարյանին, հիասքանչ մի մարդու, ով նվագակցում էր նրանց: Սուրեն Շահիջանյանը խոստովանում է, որ կյանքում երաժշտություն նվիրող ուսուցիչները քիչ են եղել, և իր համար մեծատառով մարդիկ էին Մարիաննա Հարությունյանն ու Զավեն Վարդանյանը: Նրանք տաղանդավոր ու ամենակարևոր մարդկանցից էին:

Այդ ամենից հետո Սուրեն Շահիջանյանի համար շատ դժվար էր հարազատ մարդկանցից բաժանումը: 1993 թվականին մեկնեց Փարիզ: «Լքում էի ու այդ պահին միաժամանակ լիքն էի սիրով: Մինչև հիմա ինձ մոտ են այդ օրը Զավեն Վարդանյանի նվիրած ոսկե խաչն ու նրա որդու Ռուբենի տված պլաստմասե երկու սրտիկը: Վերջին այցերին հանդիպել եմ Զավեն Վարդանյանին, պլաններ ենք կազմել, կապը երբեք չի ընդհատվել: Հույս ունեմ ու համոզված եմ, որ նա լույսերի մեջ է: Իսկ ես կորցրեցի իմ սիրտ աշխարհի մի մասը», - լսում ենք Սուրեն Շահիջանյանի ձայնը:

Նյութը պատրաստեց՝
արվեստագիտության թեկնածու, դոցենտ
Օյա Նուրիջանյանը
2023 թ.

ԶԱՎԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
դիրիժոր

«Երևանի կամերային նվագախմբի (գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Զ. Վարդանյան) կատարողական կուլտուրան բարձր է: Լսողին հմայում է նվագախմբի հավասար հնչողությունը, առանձին նվագախմբային խմբերի ներդաշնակությունը: Մեծ տպավորություն է թողնում հնչյունի ծավալայնությունը, որը համարյա հասնում է ստերեոֆոնիկ հնչողության»:

Մարգարիտ Ռուխլյան
արվեստագիտության թեկնածու
«Ավանգարդ»

GGG

«... Զ. Վարդանյանը և նվագախմբի երաժիշտները նվագում էին ոգևորվածությամբ:

Նվագախմբին ընդհանրապես հատուկ է ոգեշնչվածությունը, կատարվող ստեղծագործությունների ոճի և խարակտերի ճշգրիտ ընկալումը, ռիթմական կազմակերպվածությունը, ցիկլի ավարտվածությանը հասնելու ձգտումը»:

Մ. Տեր-Միսնյան, Կ. Խուրաբաշյան
արվեստագիտության թեկնածուներ
«Երեկոյան Երևան»

GGG

Կան երաժիշտներ, որոնք կամ տաղանդավոր կատարողներ են, կամ տաղանդավոր կազմակերպիչներ: Զավեն Վարդանյանն այն եզակիներից է, որն իր գործնեությամբ գուգորդում է տաղանդավոր կատարողն ու կազմակերպիչը:

Հիմնադրելով ժամանակակից երաժշտության անսամբլը, այնուհետև Երևանի կամերային նվագախումբը, նա տարիներ շարունակ հիացրեց մեր երաժշտասեր հասարակությանն իր ինքնատիպ մտահղացումներով:

Բախյան չորս փառատոն: Հատկապես երրորդ՝ իր նախադեպը չունեցող հորեյանականում, Զ. Վարդանյանը մեծ ուժով հնչեցրեց մեծ կոմպոզիտորի գործիքային, անսամբլային և նվագախմբային բոլոր ստեղծագործությունները, որոնց մեծ մասն առաջին անգամ (33 ստեղծագործություն): Նա առաջին դիրիժորն է, որն առաջին անգամ Երևանում սիստեմատիկաբար հնչեցրեց Բախի կանտատները:

Դիրիժոր Զավեն Վարդանյանն արտասահմանյան ժամանակակից երաժշտության մեծ պրոպագանդողն էր մեզանում: Մեր պրոֆեսիոնալ և երաժշտասեր հասարակությունը նրան է պարտական իսպանական, շվեդական, ֆիննական, ֆրանսիական ժամանակակից երաժշտության, ինչպես նաև Շնիտկեի, Գուբայդուլինայի, Դենիսովի, Հենցելի, Վերբերի, Վարեզի, Քսենակիսի և մյուս աշխարհահռչակ ավանգարդ կոմպոզիտորների ստեղծագործություններն առաջին անգամ Երևանում նուրբ և բարձր մակարդակով հնչեցնելու համար:

Դիրիժոր Զավեն Վարդանյան

ՊԻՄՍԳՁԻԱԿ ՀՈՒՆԵՐՈՒՄ



Ռաֆֆի Խարաջանյան, Նորա Նովիկ (դաշնամուրային դուետ), Սվետլանա Նավասարդյան, դիրիժոր Զավեն Վարդանյան, Երևանի կամերային նվագախումբ, Յ. Ս. Բախ եռակի կոնցերտ, Ֆիլհարմոնիայի Մեծ դահլիճ
Raff: Kharajanyan, Nora Novik (piano duel), Svetlana Navasardyan, conductor: Zaven Vardanyan, Yerevan Chamber Orchestra, J.S. Bach Triple Concerto, Philharmonic Grand Hall

Раффи Хараджаян, Нора Новик (фортепианный дуэт), Светлана Навасардян, дирижер Завен Варданын, Ереванский камерный оркестр, Тройной концерт И. С. Баха, Большой зал: филармонии



Լևոն Մամիկոնյան, Մարտին Երիցյան, Ֆելիքս Միմոնյան, Զավեն Վարդանյան քառյակ, Մարտիրոս Մարյանի տուն-թանգարանում, 1966 թ., հունիս

Quartet: Levon Mamikonyan, Martin Yeritsyan, Felix Simonyan, Zaven Vardanyan, Martiros Saryan's House Museum. June 1966

Квартет: Левон Мамиконян, Мартын Ерицян, Феликс Симонян, Завен Варданын в Доме-музее М.Сарьяна, июнь 1966



Իրինա Կոնստանտինի Արխիպովա, Երևանի կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Զավեն Վարդանյան

Irina Konstantin Arkhipova, Artistic director and conductor of Yerevan Chamber Orchestra: Zaven Vardanyan

Ирина Константиновна Архипова, художественный руководитель и дирижер Ереванского камерного оркестра Завен Варданын



Կոմպոզիտորներ՝ Մարտուն Իսրայելյան, Ռուբեն Սարգսյան, Աշոտ Ջոհրաբյան, դիրիժոր Զավեն Վարդանյան, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տան զբոսայգում, 1980-ականներ

Composers: Martun Israelyan, Ruben Sargsyan, Ashot Zohrabyan, conductor: Zaven Vardanyan, in the park of Komitas Chamber Music House, 1980s

Композиторы Мартун Израелян, Рубен Саркисян, Ашот Зограбян, дирижер Завен Варданын в сквере у Дома камерной музыки, 1980-ые

Զավեն Վարդանյանի գործունեության զգալի պիտի համարել նրա ակտիվ մասնակցությունը հայ արդի կոմպոզիտորների գործերի ստեղծման ու կատարման մեջ: Հայ կոմպոզիտորական դպրոցի նվաճումները կամերային երաժշտության ժանրում անքակտելիորեն կապված են Զավեն Վարդանյանի անվան հետ: Այն, ինչ արեցին Արտեմի Այվազյանը հայ էստրադային երաժշտության ժանրում, Ավետ Գաբրիելյանը՝ կվարտերի ժանրում, Թաթուլ Ալթունյանը՝ ժողովրդական երգ ու պարի ժանրում, նույնը՝ Զավեն Վարդանյանը հայ կամերային-նվագախմբային երաժշտության ժանրում:

Նշանակալի է Զ. Վարդանյանի ներդրումը մեզանում, համաշխարհային քաղաքակրթության դասական նվաճումների ոսկե ֆոնդը հանդիսացող գերմանական վոկալ մշակույթի արմատավարման հարցում: Մեր օպերային թատրոնում, առաջին անգամ, նա խիզախեց և բեմ հանեց այնպիսի բարդ օպերաներ, ինչպիսին են Մոցարտի «Առևանգում հարեմից» և «Կախարդական սրինգը» օպերաները, բնագրով գերմաներեն, ամենաբարձր չափանիշով: Այս կատարումները նոր ուղղություն բացեցին հայ երգարվեստում և շրջադարձային նշանակություն ունեցան հոգեբանական առումով:

Դիրիժոր Զավեն Վարդանյանին ու նրա կատարումներին հատուկ է բնական արտիստիզմը, մեկնաբանման խորությունն ու հուզականությունը, ֆրագանների քանդակային բնույթը, ստեղծագործության ձևի անթերի ընկալումն ու մատուցումը, ոճային ճշգրիտ զգացողությունը, խարսխված կատարման բարձր եվրոպական մակարդակի վրա:

Հանձինս Զավեն Վարդանյանի, մեր երաժշտական աշխարհն ունի իր գործին նվիրված անխոնջ մի մշակի, բարձր կուլտուրայի և գաղափարների տեր մի մտավորականի, որի քիչ, բայց տաղանդավոր կատարումներին ներկա լինելու ձգտումը մեր հասարակությունը միշտ էլ ունեցել է և ունի:

Էդվարդ Միրզոյան,
Ալեքսանդր Հարությունյան

GGG

Կան դիրիժորներ, որոնք օժտված են արվեստագետի յուրահատուկ լուսաթաղանթով, խարիզմայով: Նրանց ազդեցությունը տարածվում է ոչ միայն անմիջական շրջապատի գործընկերների, նվագախմբի երաժիշտների, ուսանողների, այլև լայն ունկնդրողական լսարանի վրա: Այդպիսի երաժիշտ է Հայաստանում ներկայում գործող թերևս լավագույն դիրիժորը՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Մենակատարների պետական անսամբլի գեղարվեստական ղեկավար, հանրաժանութ և սիրված մատուցող Զավեն Վարդանյանը:

... Զ. Վարդանյանին բնորոշ են ոգեշնչված դիրիժորական ժեստը, արտակարգ արտահայտիչ ձեռքերը, որոնք, կարծես, կերտում են երաժշտությունը և միաձուլվում նրա հետ, անթերի դաստակային տեխնիկան, զուսպ, սակայն ներքին արտահայտչականությամբ և կամքով լեցուն ազնվաբարո և կենտրոնացված ղեկավարման կերպը: Անկարելի է մոռանալ Վարդանյանի ձեռքերի ներքո, կարծես, չգոյությունից ծնվող Յ. Բրամսի 4-րդ Սիմֆոնիայի սկիզբը, Պ. Ի. Չայկովսկու 6-րդ Սիմֆոնիայի ծայրի մասերի ողբերգականությամբ և հոգեբանական բարձրագույն խտացումով լեցուն մեկնաբանումը կամ Յ. Ս. Բախի «Հովհաննես և Մատթեոս Պասիոնների» եզրափակիչ համարը, երբ երգչախմբի և նվագախմբի մուտքը ցույց տալուց հետո, նա մի քանի վայրկյան մնում էր ձեռքերը վեր պարզած իբրև մի պատարագիչ:

... Յ. Ս. Բախի Պասիոնների նրա մեկնաբանումը պետք է սեպվի հայ կատարողական արվեստի վերջին տասնամյակի լավագույն ձեռքբերումների շարքը: Եվ ոչ միայն: Ինչպես չի շեղվում մատուցող Վարդանյանի իրականացրած հազվադեպ կատարվող Ռ. Շոբաուսի մեծակերտ «Արդիական սիմֆոնիայի», Հայդնի «Աշխարհի արարումը» օրատորիայի անզուգական կատարումները:

... Անտոնանալի էր Զ. Վարդանյանի վերջերս կայացած համերգը Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ:

... Հ. Բելոլիզի «Ճանտաստիկ սիմֆոնիայի» հրաշալի կատարումը, վկայում է, որ դիրիժորը թեակոխել է իր ստեղծագործական հասունության մի նոր փուլ, ապրում է մասնագիտական վարպետության իր ոսկե շրջանը, որ ի դեմս Վարդանյանի՝ հայ երաժշտարվեստն ունի բազմաժանր, մեծատաղանդ դիրիժոր, որին հասու է և՛ սիմֆոնիկ, և՛ օպերային, և՛ կամերային ժանրերի տարբեր ժամանակաշրջանների ամենաբարդ երկերի համարժեք և գեղարվեստականորեն ինքնատիպ մեկնաբանումը:

Աննա Արևշատյան
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
«Առավոտ»

...Приятным сюрпризом был концерт Ереванского камерного оркестра. Молодой коллектив восхитил публику звуковой культурой, технической свободой, интеллигентностью. Основатель и дирижер Завен Варданян - прекрасный дирижер и педагог. Его движения скромны, даже аскетичны (перед ним ведь камерный оркестр).

Он красиво “распевает” мелодическую линию, точно ведет фразу, ставит нужные точки... Оркестру присуща культура звука, тонкие штрихи и вообще отличное владение смычком...

Ս. Կուդիպոս,
դոցենտ Գոսկոնսերվատորիա Լիտ. ՍՍՐ,
III փառատոնային կամերային օրկեստր,
Լիտվայի թերթ «Կոմունիստ»

... Ազգային թատրոնի բեմում առաջին անգամ հրնչում է գերմանալեզու օպերա՝ Մոցարտի «Առևանգում հարեմից»-ը՝ բնագրով:

... Դժվարին պայմաններում կատարած տքնաջան աշխատանքն այսօր լիովին իրավունք է տալիս արձանագրելու Զավեն Վարդանյանի և ներկայացման մեջ ներգրավված կատարողական կազմի փայլուն հաղթանակը:

Դիրիժոր Զավեն Վարդանյան

նագրեյա Զավեն Վարդանյանի և ներկայացման մեջ ներգրավված կատարողական կազմի վատում հաղթանակը:

Միանգամայն ողջունելի է Զավեն Վարդանյանի մուտքն օպերային թատրոն: Առաջին իսկ պրեմիերան ցույց տվեց, որ Զավեն Վարդանյանը օժտված է օպերային դիրիժորի հիմնական կարևոր հատկությամբ՝ դառնում է երաժշտական արարման բոլոր մասնակիցներին համախմբող և ուղղություն տվող այն կենտրոնաձիգ ուժը, որն անհրաժեշտ է երաժշտական ներկայացման իրականացման համար:

Աննա Արևշատյան
արվեստագիտության թեկնածու
«Ազգ»

В Национальном театре оперы и балета состоялась премьера концертного исполнения оперы Моцарта "Похищение из серая". За пультом стоял известный дирижер Завен Варданян, в свое время создавший Ереванский камерный оркестр и долгие годы возглавляющий его. Прекрасная премьера.

Маргарита Ружкян
кандидат искусствоведения
//Время

...Приятной неожиданностью явилось выступление Ереванского камерного оркестра под управления З. Варданяна. Коллектив отличается высоким профессиональным мастерством и пониманием интерпритации классики.

Ионес Урба, музыковед
//Гисса (//Правда), Литва

«Մոցարտի կախարդական սրինգով մենք էլ կախարդվեցինք այս երեկո... Մի երկու ժամ ասես մոցարտյան Վիեննայում լինեինք... Սա երևույթ էր մեր մշակութային կյանքում...», այսպիսի խոսքեր էին հնչում դիրիժոր Զավեն Վարդանյանի շուրջ համերգից հետո: Վաստակված հաջողություն էր արդարև: Երկրորդ անգամ նա իրագործեց իր ինքնատիպ մտահաղացումը մեզ մոտ համերգային կատարմամբ հնչեցնելով մոցարտյան օպերաներն ըստ որում բնագրի լեզվով՝ գերմաներեն: Նախ «Առևանգում հարեմից»-ը, իսկ այժմ «Կախարդական սրինգը»: Անմիջապես ասեմ, որ խիզախության և ստեղծագործական ջանադիր աշխատանքի արդյունք է այդ հաջողությունը:

...Ինձ այս օրերին ամենից ավելի հուզում է փաստը, որպես մշակութային իրադարձություն: Գրուխ բերված է այնպիսի գործ, ի ջանք է դրված այնպիսի աշխատանք, որ կարելի է հերոսական կոչել մեր օրերում: Տարբեր սերունդների ունկնդիրներն անկեղծ ոգևորությամբ գնահատեցին կատարված գործը, որ գեղագիտական ճշմարիտ հաճույք պատճառեց:

Կարպիս Սուրենյան
«Ազգ»

Օրեր առաջ Կոմիտասի անվան կամերային տանն իրականացավ մեկն այն երևույթներից, որը հավերժ կմնա հայ մշակույթի պատմության մեջ, որպես ամենապայծառ ու լուսավոր եղելություններից մեկը: Որպես հայ հպարտ եմ, որ մեզանում, ի վերջո ամբողջությամբ կատարվեց գերմանական ժողովրդի հանճարներից մեկի՝ Յոհան Սեբաստիան Բախի, «Չարչարանքներ ըստ Հովհաննոս» օրատորիան:

Այն իրականացրեց դիրիժոր Զավեն Վարդանյանը սեփական ներաշխարհային չափանիշներով:

Պատեհ առիթ ունենալով ծանոթանալու աշխատանքի ընթացքի հետ, որպես երաժշտության երկրպագու խոնարհվում եմ նրա կազմակերպչի՝ Զավեն Վարդանյանի առաջ:

Վարդան Նիկողոսյան
«Ժամանակ»

...Хочется сказать лестные слова в адрес Ереванского камерного оркестра и его художественного руководителя Завена Варданяна. Коллектив стал одним из открытий фестиваля советской музыки в Тбилиси, а его программа (Мансурян, Израелян, В. Бабаян, Зограбян) получила высокую оценку слушателей.

Т. Хренников, Народный артист СССР,
председатель Союза композиторов СССР
//Коммунист

Творчество и исполнительская культура - неизменные спутники. Расцвету армянской камерный и ансамблевой музыки в 70-80-е годы в сильнейшей степени способствовала деятельность камерного оркестра под руководством З. Варданяна.

С. Коптев, М. Терьян, М. Ружкян “Симфоническая музыка и инструментальный концерт”
/Музыкальная культура Армянской ССР.
М.: Музыка

Ես մեծ ուշադրությամբ լսեցի կամերային երաժշտության տանը կայացած իսպանական և հայկական երաժշտության համերգները, որոնց ամբողջ ծանր պատասխանատվությունը հիմնականում ընկած էր Երևանի կամերային նվագախմբի և նրա գեղարվեստական ղեկավար ու դիրիժոր Զավեն Վարդանյանի վրա: Չեմ կարող չասել, որ հատկապես վերջին երկու ստեղծագործությունները՝ Աշոտ Չոհրաբյանի «Նվիրումն» ու Էդուարդ Հայրապետյանի «Ջութակի Կոնցերտը» և նրանց կատարումն ինձ վրա թողեցին ցնցող տպավորություն:

Գաղտնիք չէ, որ երաժշտական ստեղծագործության ճակատագիրը հիմնականում կախված է կատարողից:

ՄԱՍԿՆԵՐԱՅԻՆ ԿԱՄԵՐԱՅԻՆ ՕՐԱՏՈՐԻԱՆ



Լուսանկ. Չ. Սարգսյանի

Մենակատարներ՝ Ռուբեն Ահարոնյան, Ժան Տեր-Մերկերյան, Երևանի կամերային նվագախումբ, դիրիժոր Զավեն Վարդանյան, Ֆիլհարմոնիայի Մեծ դահլիճ, 1980 թ.

Soloists: Ruben Aharonyan, Jean Ter-Merkerian, Yerevan Chamber Orchestra, conductor: Zaven Vardanyan, Philharmonia Grand Hall, 1980

Солисты Рубен Агаронян, Жан Тер-Мергерян, Ереванский камерный оркестр, дирижер Завен Варданян, Большой зал филармонии, 1980



Զավեն Վարդանյան, Ալեքսանդր Հարությունյան

Zaven Vardanyan, Alexander Harutyunyan

Զավեն Վարդանյան, Ալեքսանդր Հարությունյան



Զավեն Վարդանյանը և Աշոտ Չոքրաբյանը նվագախմբային փորձի ժամանակ

Zaven Vardanyan and Ashot Zohrahyan during an orchestra rehearsal

Завен Варданян и Ашот Зограбян во время репетиции оркестра

ров к определенным жанрам - так, после организации Ереванского камерного оркестра в республике появилось значительное число сочинений, ориентированных именно на его состав.

Ирина Золотова,
кандидат искусствоведения,
//Музыкальная жизнь

...Но пожалуй, важнее в этом концерте - качество исполнения... В этом особая заслуга З. Варданяна, собравшего весь этот состав (два камерных хора, солисты - сопрано, тенор, альт - орган, оркестр) и объединившего его в одном стилистическом ансамбле. Точность графического рисунка, отчетливость соотношения разных пластов музыкального развития, ритмическая

слаженность, выравненность общего звучения - вот качества, присущие этому исполнению. Тембровая однородность солирующих и хоровых певцов хорошо сливалась с инструментальными голосами, что так важно для музыки Баха, чуждой ложной патетики.

Не будет преувеличением сказать, что культура подобного исполнения - нечто качественно новое в нашей концертной жизни...

А. Григорян,
кандидат искусствоведения.
//Коммунист

Բախի կոթողների կատարումները, մեր հոգևոր կյանքի, վերելքի շրջափուլերն են կազմում: Այդպիսին

Դիրիժոր Զավեն Վարդանյան



Երևանի կամերային նվագախումբ,
դիրիժոր Զավեն Վարդանյան,
Գեղարդ, 1980 թ.

Zaven Vardanyan, Conductor of Yerevan Chamber
Orchestra
In Geghard, 1980

Ереванский камерный оркестр, дирижер
Завен Варданян, Гегард, 1980

ՄԱՍԿԱՆԻՆԻՍՏ

Էր «Չարչարանքներ ըստ Հովհաննու» պասիոնի աննախադեպ կատարումը մատուցող Զավեն Վարդանյանի գլխավորությամբ:

«Պասիոնի» կատարմամբ բացվեց Հայաստանում քրիստոնեության հռչակման 1700-ամյակին նվիրված առաջին փառատոնը:

... Զ. Վարդանյանն ակնածանքով և խնամքով վերստեղծեց Բախի սրբազան երաժշտությունը: Նա միաձուլեց ու խանդավառեց երգչախումբը, նվագախումբը և մենեդիչներին: Փորձերն ու համերգը ցույց տվեցին, որ դիրիժորը խորապես յուրացրել է նախորդների փորձը, քաջատեղյակ է Բախի լեզվի իմաստաբանությանը, խորհրդանիշներին, Շվայցերի, Աբերտի վերլուծականներին, Ռամինի, Ռիխտերի, Արնոնկուրի և այլոց մեկնաբանումներին: Սակայն նա իր խոսքն ուներ ասելու, և ասաց:

Մեր աչքի առջև դիրիժորը «գծագրում» էր Բախի «գոթական տաճարը», խմբերգերի պլունները կամարակապում ռեչիտատիվներով արիաների ծապավեններով պարուրում դրանք: Ողբերգության, «կատարսիսի» օրենքով լսողներիս ներգրավեց գործողության մեջ՝ ամբոխային խմբերգերում մեղսակից էինք դառնում, մադրիգալային խմբերգերում խաչն ուսած, գայթեղով հետևում էինք Հիսուսին դեպի Գողգոթա, խորալներում և արիաներում՝ կիսում երգիչների գորովանքն ու կսկիծն առ Հիսուս: Այս ամենն իրականացնելու համար պահանջվում էր դիրիժորական մեծ կամք, բազմաձայն մտածողություն, ձևակառուցման, առողջանության տիրապետում և շատ ու շատ շնորհներ, որոնցով առատորեն օժտված է Զ. Վարդանյանը: Անհնարին է հիշատակել այս մեծակերտ կոթողում հանդիպող կատարողական պայծառացումները, սակայն անմոռանալի են առաջին խմբերգը «Տէր, Տէր, Տէր»՝ «Պասիոնի» գունագարդ մուտքը, և վերջին հենասյունը՝ «Թող այս սուրբ մարմինը խաղաղ հանգչի» խմբերգը:

Այս բոլորը մատուցող Զ. Վարդանյանն ի սպաս դրեց Աստ-

ծո խոսքի անկորուստ տեղ հասցնելուն, պատարագչի պես միջնորդ կանգնելով մեր և Բախի միջև, ինչպես Բախն է միջնորդ մեր և Աստծո միջև: Դիրիժորը «ՄՓՌԵՅ» Բախի երաժշտության «ռաֆայելյան գեղեցկությունը» (Հեգել), որը հավիտենական կյանքի մի շող գգեց մեր անհանգիստ սրտերի խորքը...

Դանիել Երաժիշտ
«Առավոտ»

Завен Варданян и его детище, Ереванский камерный оркестр - из ярко светящихся маяков отечественной музыкальной культуры 1970-х, 80-х и далее, годов. Их, во многом событийную, артистическую и "особо" просветительскую деятельность трудно переоценить. С Завеном Варданяном вошла в нашу жизнь культура фестивалей - знаменитого "баховского", современной музыки, закрепились понятия служения и миссии, понятия, - не только высочайшей компетентности, но и нравственного музыкантского долга, открытости новому. Не честь, ни количества заданных ими премьер, ни вызванных к жизни произведений армянских композиторов... С Завеном Варданяном и Ереванским камерным имела счастье исполнить все баховские и большинство моцартовских концертов. Ереванский оркестр был предоставлен мне для дирижерского дебюта.

"Ереванский камерный" был из важных составных моей жизни, позволяющих ощущать ее всегда в настоящем времени. С сердечной болью восприняла уход соратника, друга, его невосполненное при жизни, и теперь уже, увы, невосполнимое жизненное пространство, призванное дарить Радость узнавания и "обжиг" Красоты, чтобы оставаться человеком. Низкий поклон и огромная тебе за все благодарность, Завен, дорогой. Пусть легким будет твой шаг в вечность, а летопись армянской культуры с благоговением сохранит Твой след на земле ...

Светлана Навасардян